Իմանալով ցուցահանդէսին, պէտք է աւելացնել, որ այնտեղ ի ցոյց էին դրված նմանապէս մեծ քանակութեամբ մեծածաւալ քարտէզներ, դիագրամաներ, որոնք ներկայացնում էին կաթօլիկ միսիօնարութիւնների տարածութեան ծաւալը երկրագնդի զանազան մասերում եւ ի՛նչ նրանց ունեցած ծախքերի եւ եկամուտների քանակութիւնը անցած հարիւրամեակի ընթացքում. բայց որովհետեւ ինչպէս ասացինք, դրանց կից չը կար ոչ մի ուղեցոյց, ամփոփ տեղեկութիւններ պարունակող, որից կարելի լինէր օգտվել, ուստի մենք դժուարանում ենք մտնել այդ մանրամասնութիւնների մէջ:

Շատ արիստ նմանապէս, որ բողոքական միսիօնարներն էլ չէին հոգացել այդպիսի մի ցուցահանդէս կազմելու, այն ժամանակ առհասարակ միսիօնարական գործունէութեան մասին ստացած գաղափարը, ի հարկէ, աւելի կատարեալ կը լինէր Յամմեանի դէպք, ներկայ թէ եւ սահմանափակ, միմիայն կաթօլիկների վերաբերեալ ցուցահանդէսը. կրկնում ենք, շատ խոր եւ լուրջ տպաւորութիւն է գործում այցելողի վրա:

Մ. Չալեան

գրումները, դառնալի է, որ իրանց յայտնի դան-
դաղամտութեամբ չեն տեսնում իրանց քթի
տակ ընկած այս սքանչելի վայրերը եւ հէնց
չանագիտական տեսակետից էլ կորչում են
յարմար առիթը:

Ա. թով.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, հոկտեմբերի 5-ին

Կիրակի օր, ամսին 8-ին, պէտք է գումար-
վի Տափեր-Թաղի (Քաղաքացի) ս. Գեորգ եկե-
ղեցու ծխակախանի ժողով քննելու եկեղեցու
չինովեան նոր մակարդակը, որ կազմել է
տակ երկնքի տեղ եւ որովհետեւ թէ արդէն հաս-
տատված մակարդակով չինել եկեղեցին, թէ
նորով:

Իմ կարծիքով ընտանի է, եթէ ժողովը նոր
մակարդակի համար ոչ մի կարծիք չը յայտնէ,
այլ պահանջ է երկնքի տեղից բացառութիւն թէ
որ օրէնքի հիման վրա նա սնչաչանում է ծը-
խակախանի ժողովի վիճիւր եւ աւելորդ ծախսեր
անելով նոր մակարդակ է կազմել տալիս. եւ
ինչով է երաշխաւորում, որ եթէ այժմ ծխա-
կախանի ժողովը որոշէ մի խնդիր, դարձեալ եւ-
րեցիվոր ինքնապաշտպան չի փոխի:

Մի ամբողջ տարի է, որ մենք ունենք ար-
դէն հաստատված մակարդակ եւ այդ մակար-
դակը չէ կազմված մի կամ մի քանի մարդու
հաւանութեամբ, որպիսին է նոր մակարդակը,
այլ տարիներ ընթացքում եղել են ծխակախ-
անի եւ մասնագետների ժողովների՝ նախագա-
հութեամբ թէ Թիֆլիսի սրբազան առաջնորդի
եւ թէ նախկին երեցիվորների, որոնց միա-
ձայն հաւանութիւնն է գտել, ապա թէ առա-
ջարկվել է ի հաստատութիւն. եւ այդ կերպ
ընդունած մակարդակի վաւերացումն ստանա-
լուց յետոյ վերիննալ է անհասկանալի ցան-
կութեամբ մի ինչ որ մակարդակ կազմել տալ
եւ աշխատել քանդել, տակն ու վրա անել մի
վճիռ, որ կայացել է ձեռնհաս ժողովներում եւ
ստորիկ նորեւոր իշխանութեան եւ կառավա-
րութեան հաստատութիւնը. դա չը լսված մի
քան է:

Եւ իբրեւ միայն քանանայ յիշելու եկեղե-
ցու, իմ սրբազան պարագա եմ համարում ծը-
խակախանի առջ ասել բացարձակ, որ այս
նոր առաջարկութիւնը միանգամայն ապօրինի
է, բայց որ վրաստան է միասակար թէ սկզբ-
բունքով, թէ նիւթապէս:

Եւ վերջապէս, եթէ պ. Վարդապետեանցը
այդպիսի մի արտօրինակ միտք յղանալու ձեռ-
նարկն ունէր, ինչու նա քանդեց եկեղեցին եւ
անս վնասերով ամրան է ինչ եկեղեցու տեղ
նրա ծխակախանը եւ միայնակ դատարկ
ասիկ են տեսնում, անմիջեմբ թափառում
եւ դեռ ո՞վ գիտէ թէ երբ վերջ կը ստանայ
չինովեան գործը:

Յովհաննէս քան. Մարտիրոսեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, հոկտեմբերի 6-ին

Ինչպէս երեւում է, մի քանի «արտօրինակ»
կողմի են պարբերաբար վերջ հասցնել հայ
ընկին, այս բազմաչարար Մեղայանայի տա-
ճարին, որ ուրիշ ազգութիւնների մէջ այնքան
յարգի է եւ նախանձելի, իսկ մեզ մոտ մոռա-
ցութեան մասոված, արճաբարկված եւ յանախ
համակերպի սպարեզ դարձած: Ինչ երէկ էր,
որ «Մշակը» համեմատութեան դասեր էր կար-
գում այսօրինակ արտօրինակներին, դեռ երէկ էր,
որ անպատուութեամբ, նախատու էին պ. Խարա-
ղանին, որ նա իր սյուրբը եւ չափը չէ ճա-
նաչում: Բայց ինչպէն երեւում է, հայ մասու-
լի ապականեցը չեն ազդում, չեն կարծեցի-
նում այդպիսիների կոչուածքն երեստարակ Յե
ինչպէս կարող են ազդել երբ հասարակու-
թիւնը օգնութեան չէ գալիս մասուլիս եւ նրա
նեւ համարալի չէ գործում: Ինչպէս կարող է
այդպիսիների թիւը պակասել, երբ այնպիսի
մի պատասխանատու մարմին, որպիսին է Բա-
ղուի հայ գերատեսչական ընկերութիւնը, նոյն
նախ աջակցում է, երևա ու դիպում է տալիս
Այսպէս, օրինակ, մինչեւ «Մշակի» մէջ
պ. Խարաղանին պախարակում էին, որ նա
չափազանց յանդուձել է, որ չը գիտէ իր սյուրբ
ընդ անձանների մէջ մնալ, հէնց միւս օր այդ
պարտը հրաւիրվում է Բաղուի խմբի կողմից
զերիւտ տալու... Դիցե՛ք մեր հասարակու-
թիւնը դեռ ազգէ է. նա անխաբիւր ձեռք է
մեկնում թէ մի արեւնարբու վախառուի եւ
թէ մի անձուկէր հասարակական գործիչին:
Գիտե՛ք նա չը գիտէ պատմիկ հասարակական
մեղապարաններին այնպէս, ինչպէս, օրինակ,
ուսու հասարակութիւնը պատմեց յայտնի եր-
գի Յիզկունիին կամ մոտ օրերն Աստարա-
նում երբեք իբրբովին: Բայց չէ որ Բաղուի
զերատեսչական ընկերութեան ղեկավարները
մի քիչ բարձր պիտի լինեն ամբողջ իրանց
հասկացողութիւններով:

Սակայն դառնանք ինչորին Պ. Խարաղանի
զարկները հանգիստ չեն տուել գերատեսչա-
նուն կողմ պ. Կարինեանցին, որն արշինանոց
տառերով յայտարարել էր, որ հոկտեմբերի 5-ին
Վեդեղիկ թարթուական դահլիճում ներկայաց-
նելու է անտեղյակ սիրողներին մասնակցու-
թեամբ ձեռք մէկ զո՞՞ն կօսեղբանն եւ եթէ այդ
զերեր մի գոհ կար, դա յուսախար փոքրաթիւ
հասարակութիւնն էր, որ վկայ էր թէ ինչպէս

մի քանի «արտօրինակ» անպատուութեամբ են հայ
թաւորները: Բացառութիւն կազմում էր մի օ-
րերով, որ բաւական լաւ կատարեց իր դերը:
Ընթացողներին զարմայնելու համար պիտի
աւելայնեմ, որ պ. Կարինեանը վերջը կատա-
րեց Գոգոյի յայտնի «Սեւաղարի» յիշատակա-
րանքը մենախօսութիւնը, բայց թէ ինչպէս,
այդ մի հարցնէք:

Արդեօք մի օր վերջ պիտի լինի այս ամենին, թէ ոչ:

Հին թատերասէր

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բերլինում, ինչպէս հաղորդում են «Քյո-
ՅԵՃ» լրագրին, կազմակերպվում է բնագիտ-
աների մի ընկերութիւն, որի անդամները մաս-
շիր են այս տարի գիտնական նպատակով ճա-
նապարհորդութիւններ կատարել դէպք Սրբիմ
եւ Կովկաս: Ռուս ընտելտներին մի քանիսը
հրաւեր ստացան գերմանացիների կողմից մաս-
նակցելու յիշեալ ճանապարհորդութիւններին:

Նիկոլայեւսից հաղորդում են մայրաքաղաքի
լրագիրներին, որ այնտեղ մեծ հանդեսով նա-
ւարանից ջուրն է իջեցրած Սեւ-ժովի նաւա-
տորմի «Տարիկեան իշխան» զբոսակիրը: Հան-
դէսին ներկայ էին Սեւ ժովի նաւատորմի գլխա-
ւոր հրամանատար փոխ-ժովապետ Տիրտով-
ուրիչ իշխանաւորներ, քաղաքի եւ դասակար-
գների ներկայացուցիչներ եւ բազմաթիւ հասա-
րակութիւն: Սեւ ժովի նաւատորմի սօնը մի
եւ նոյն ժամանակ եւ քաղաքի սօնն է, որի
հիմնադրի անունով կոչված է նաւը: Քաղաքը
նոր գրահարկի համար պատրաստում է սուր-
բերի երեք պատկեր, որոնցից մէկը յանուն
Մեծ-Հայաստանի Լուսաւորչի սուրբ Գրիգորի:

Պետերբուրգի ուսումնարանական շրջանի

հոգաբարձուն ուղարկել է իր շրջանի մէջ
պանդով դպրոցական հաստատութիւնների վար-
չութիւններին հետեւեալ շրջաբերականը. «Ընթ-
շանի հոգաբարձական խորհրդի նիստում, որ
տեղի ունեցաւ սեպտեմբերի 19-ին, քննվում
էր թուանշանների հարցը: Ներկայումս գոյու-
թիւն ունեցող կանոններով թուանշաններ
գրվում են աշակերտների ամեն մի պատաս-
խանի համար եւ այդ թուանշանները իւրա-
նշանները, ինչպէս եւ առաջ, կը հաղորդվեն
ճնոդներին, որոնք բացի դրանից տեղեկու-
թիւններ կը ստանան այն բոլոր դէպքերում,
երբ իրանց որդիք չեն ցոյց տալ ցանկալի ա-
ռաշնոյթութիւն: Հոգաբարձական խորհրդի
անդամների ձայները՝ աշակերտական զբաղ-
մունքների գնահատութեան հին եւ նոր ձևեր
վերաբերմամբ բաժանակցելու: Ի նկատի առնե-
լով այս հանգամանքը եւ աչքի առաջ ունենա-
լով, որ թուանշանների հարցը չէ կարող չը
հետաքրքրել աշակերտների ճնոդներին, եւ շատ
օգտակար եւ ցանկալի եմ համարում լսել այս
հարցի մասին ճնոդների կարծիքը: Չունենա-
լով ասական հնարաւորութիւն լսելու եւ ջըն-
նակաւորելու ճնոդներին առանձին - առանձին
կարծիքները, եւ հարկադրված եմ բաւականա-
նալ միայն նրանցից ձայներ հաւաքելով: Այս
պատճառով առաջարկում եմ ձեզ առանձին
չիջաբերականով հարցնել ձեր խնամքին յանձն-
ված դպրոցի աշակերտների բոլոր ճնոդներին,
թէ իրանց որդիկներն զբաղմունքների գնահա-
տութեան վերաբերեալ ձեւերից որին են գերա-
դասութիւն տալիս նրանք: Եւ յոյս ունեմ, որ
զուք կատարելապէս անաչառ կը լինէիք այս
հարցուփորձն անկախ ծանկալի էր, որ ճնոդ-
ների պատասխանները բոլորովին ազատ լինէին
ներքնաւնկերից թէ ձեր եւ թէ ուսուցիչների
կողմից: Յուսով եմ, որ ճնոդներից ոչ ոք չի
հրաժարվի տալ մի կարճ պատասխան, թէ որն
է գերադասում նա—հին ձևը, թէ նորը»:

Դ. Նիկոլայեւսի առաջարկութեամբ, ուսու
անթրոպոլոգիների ընկերութիւնը որոշեց գտնել
Ա.Ֆրիկայի հետազոտող, յայտնի ճանապարհորդ
Միկուլայա-Մակայի գերեզմանը: Որոշում
ների հետեւանքը վերին աստիճանի անմիջ-
թարական էր: Նրա գիտնական բարեկամները

ոչ միայն չը գտան Միկուլայա-Մակայի գերեզ-
մանը Վոլգոլիան գերեզմանատանը, ուր թաղ-
ված է նա, այլ նաեւ համոզվեցին, որ անհետ
կորել են նրա էթնոգրաֆիական ընդարձակ
աշխատութիւնները եւ հուսաքած ներթերե-
րմաշված է միայն, որ նրանք երկրոր ժամա-
նակ պահպանվում էին ուսուցիչ աշխարհագրա-
կան ընկերութեան մէջ, որտեղից վերցրել է
հանդուցեալի եղբայրը եւ տարել Մոսկվա, իսկ
այնտեղ նրանք անհետ չբացել են: «Այն ինչ—
նկատում է այս առիթով «ՅԵՃ. Կըրբեք» լրա-
գիրը—ուսու անթրոպոլոգիների ընկերութեան
անաչառ եւ արգել դնահատութեամբ՝ Միկուլ-
այա-Մակայ կենտրոնական Ա.Ֆրիկայի հետա-
զոտութեան համար արել է ոչ պակաս գործ,
քան շատերը հուշակված անգլիական հետազո-
տողներին»:

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Հոկտեմբերի
11-ին նշանակված են քաղաքային ընտրու-
թիւններ: Բազմաթիւ քաղաքայինների ընտ-
րութիւններին մասնակցելու իրաւունք ունեն
միայն 169 անձ, որոնք պէտք է ընտրեն 15
լիազոր եւ 3 կանխդատա Քաղաքապետի թեկ-
նածուներ համարվում են Նիկոլայու Տէր-
Մատթէսեան եւ ներկայ քաղաքապետի օգնա-
կան Վարդան Նիկոլայեւսի: Կազմված են եր-
կու կուսակցութիւն, որով ուղղում են անցկաց-
նել իրանց թեկնածուներին: Երիտասարդ կու-
սակցութեան թեկնածուն է Վ. Ենիկոլայեւսի:
Նա համաձայնվում է իր քուէտուվը դնել մի-
այն այն դէպքում, եթէ ձայնաւորների 2/3 մասը
ինտելիգենտներ ընտրվեն: Պէտք է խոստովա-
նել, որ պ. Ենիկոլայեւսի ներկայ ժամանակ
միակ յարմար եւ քաղաքային գործերին հմուտ
անձնաւորութիւնն է, որին կարելի է առանց
վարանելու քաղաքապետի պաշտօնը յանձնել»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ԻՍԱԼԻԱԹԻՑ

Հոռ, հոկտեմբերի 2-ին

Լատին եկեղեցին Գրիգոր Լուսաւորչի տօնը
հոկտեմբերի 1-ին է տօնում. թէպէտեւ Հայ-
կազնեան դպրոցը Հոռում՝ ըստ ժամանակին
մեծաւ հանդիսեւ կատարում է «Վուսու ի վի-
րպան», «Էլի ի վիրապէ», եւ առաւել չբեղու-
թեամբ «Գիւտ Նշխարայ սրբոյն Գրիգորի Լու-
սաւորչի» տօները, բայց այժմ, ի նկատի ունե-
նալով, որ օտար եկեղեցին տօնում է հայ Լու-
սաւորչի տօնը, մի հայ սիրտ անկարող էր ան-
տարբեր գտնվել այսպիսի հանգամանքում:
Ուսու Հայկազնեան դպրոցն էլ, ուղեղով հան-
գամանքից օգտվել, եւ օտար երկրի ներքեւ,
օտար ժողովրդի ներկայութեամբ, կատարվեց
հետեւեալ հանդէսը:

Պէտք է, որ մեր յարգելի ընթերցողը աչքի
առաջ ունենայ, որ այժմ Հոռի Հայկազնեան
դպրոցը ամառանոցում է գտնվում եւ այդ
տօնական հանդէսը տեղի է ունենում ամառա-
նոցի շքեղ ապարանում:

Իտալիայի Ուեբրիա նահանգի, Սարինեան
լեւաների միոյն ստորոտից 200 մետրի չափ
բարձր դիրքի վրա յիշված են Փօճճօ-Կաթինո
եւ Կաթինո գիւղերը՝ (ուր արիւտակարծիք
գասակարգը Հոռից եւ ուրիշ քաղաքներից
գրվում է). սոցա երկուքի միջովալրում Հոռի
հայոց ամառանոցի հպարտ պալատն է կառուց-
ված, որն իր առջեւ ունի բաւականաչափ ըն-
դարձակ տարածութեամբ հող, ծածկված 200-ից
աւել ձիթենիներով, որոնք իրանց մշտադաւար
տերւունքով մի առանձին շքեղութիւն են տա-
լիս վայրին:

Նոր ստանդով սեպտեմբերի 30-ին, արեւը
մայր մածնելու միջոցում, վառօդով լցված բազ-
մաթիւ անօթները (mortaretti) հրանկաններ
թնդանօթային ձայնով օդի մէջ որոտում եւ
բամբուլ էին պատճառում, աւետելով երկրորդ
օրվայ հայոց Լուսաւորչի տօն լինելու: Դպրոցի
դարպասի չէմքի վրա գրված էր հետեւեալ ի-
տալերէն արձանագրութիւնը խոշոր տառերով.
«Nel di sacro al nome di San Gregorio Illu-
minatore apostolo dell' Armenia, il Collegio
Armeno al suo Patrono festeggiante plaude»:
Իմաստն այս է. «Ք բարնշան աւուր անուան
տօնի սրբոյն Գրիգորի Լուսաւորչի Հայաստա-
նում առաքելոյ, հայ դպրոցն, ի պատիւ
պաշտպանին իւրոյ, տօնէ ցնծութեամբ գտօն
հանդիսի»:

Հոկտեմբերի 1-ի արշալոյսին նոյն օրորն-
գոտ հրանկանի ձայները տեղի ունեցան եւ
այ ու ահակ գտնվող գիւղերի բնակիչներին
քննից արթնացրին յիշեցնել տալով նոցա հայոց
մեծ սուրբի տօնը: Ապարանի դարպասը կա-
մարաձեւ դափնի տերւունքով զարդարված

էր, սոյն տերւունքից սիւղված էին մատուռ
տանոց բազմաթիւ մարտերայ սանդուղքների
վրա: Մատրան սեղանի վրա գրված էր մի ու-
կնձամուկ անօթով Գրիգոր Լուսաւորչի մա-
սուէքը, որը շուրջ վառված էին թաղա-
թիւ մոտեր: Մուռքն այդ օր պալատ էր ժողո-
վրդի համար հոռոյնցի եւ այլ օտար եւ տե-
ղայի երկեսո այնկողներին չափ չը կար, ո-
րոնք գիծում էին մատուռը՝ Հայաստանայց
առաքելոյ մատուռը համարելու: Նոյն օր,
երեկոյան ժամը 8-ին, հայոց դպրոցի փառա-
կերտ պալատը վերեւից վար կապերները եւ
գոյնզգոյն բնագլան կրակների լոյսով լուսա-
ւորված էր: Իտալացի ժողովուրդը, արք եւ
կանայք, տօնի զգեստներով, հաւաքվել էր
Հայկազնեան դպրոցի հրապարակը՝ հայերին եւ
իրանց պաշտպանին յարգելու համար: Բարակ
գոյնզգոյն թղթից շինված 8 հատ մեծադիր օ-
ղապարիկներ օդը բարձրացան բուն ծափա-
հարութեանց մէջ. շատ ձայներ եւս լսվում էին՝
«Vivano gli Armeni, viva San Gregorio degli
Armeni» (կեցցէ՛ն հայք, կեցցէ՛ սուրբ Գրիգոր
Լուսաւորչն հայոց): Օղապարիկներից յետոյ
արեւտական կրակ, ճոխ նրախաղ տեղի ունե-
ցաւ. զանազան կենդանի պատկերներ եւ ծա-
ներ էին տեսնվում օդի մէջ:—Այս հանդէսը
մեծ տպաւորութիւն թողեց ժողովրդի վրա,
որոնք գոհ սրտով եւ անքնդհատ ծափահարու-
թեամբ աղաղակում էին՝ «կեցցէ՛ն հայք, կեց-
ցէ՛ Հայաստան»:

Սարգիս վ. Տէր-Աբրահամեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիւրքական կառավարութիւնը, ինչպէս
հաղորդում է «Berliner Tageblatt» լրագիրը,
յայտնեց ուսուցիչ կառավարութեանը, որ նրա
բոլոր պահանջներին՝ Էրզրումի ուսուական հիւ-
պատոսի վրա քիւրդերի կողմից գործած յար-
ձակման վերաբերմամբ՝ բաւարարութիւն կը
տրվի: Նոյն լրագրին հաղորդում են Կ. Պօլսից,
որ արտասահմանում գտնվող երիտասարդ-
թիւրքերի կուսակցութեան պարագլուխները
գիմեցին սուլթանի տեղեկանալու, թէ ինչ
գրաւականներ կը տրվեն երաշխաւորելու հա-
մար նրանց ապահովութիւնը, եթէ նրանք
վճեն վերադառնալ հայրենիք եւ կարող են
արդեօք նրանք յոյս ունենալ, որ յարժուսիս
գրաւված գոյքերը կրկին կը վերադարձվեն
տեղերին: Ասում են, թէ սուլթանին դիմողնե-
րի մէջ է նաեւ նրա յայտնի փեսայ Մահմուդ
փաշան: Պաշտօնական շրջաններում խօսում
են, որ սուլթանը հակված է ներկու մնացեալ
երիտասարդ-թիւրքերին, եթէ միայն Մահմուդ
փաշան վերադառնայ Թիւրքիս:

«Times»-ի թղթակիցը հաղորդում է Կ.
Պօլսից, թէ գերմանական թաղամասանքը մը-
տադրութիւն ունի այցելել Պալատին: Բ. Գու-
նը, համաձայն սուլթանի հրամանին, յանձնա-
րարից Բերլինի թիւրքական գեսպանին յայտ-
նել գերմանական կառավարութեանը, որ նա
ոչ մի պատասխանատուութիւն չէ կարող առնել
իր վրա այն հակազբմանական ցոյցերի առի-
թով, որոնք կարող են տեղի ունենալ Պալատ-
ինում վերմանական թագաժառանգի այնտեղ
կեղծ ժամանակ:

—Սօֆիայից գրում են «C. P. ՅԵՃ» լրագրին.
«Մուգաֆիքը-Էդիսն Շահը Կ. Պօլսից եկաւ
Սօֆիա սեպտեմբերի 22-ին, այսինքն հինգ օր
աւելի վաղ, քան այդ նշմարվում էր Իրանի
միապետին դիմաւորելու համար կազմված
թիւրքական պաշտօնական ծրարքով: Այստեղ
հասած տեղեկութիւնները երեւում է, որ Շա-
հը նշանակված ժամանակից առաջ հեռացել է
Կ. Պօլսից նրա համար, որ սուլթանը չէ կա-
տարել ընդունելութեան այն պայմանները, ո-
րոնց մասին առաջուց համաձայնութիւն էր
կայացել Միքաէլ-Բիգա-խանի եւ թիւրքական
կառավարութեան մէջ: Այդ համաձայնութեամբ
սուլթանը պէտք է դիմաւորէ «Շահնաշին»
Դոլմա-Բախչէ-Սարայ պալատի նուստանոցի՝
վրա, այսինքն այնտեղ, որտեղ քիչ տառջ դի-
մաւորել էր գերմանական կայսրին, բայց իս-
կապէս դիմաւորեց արքային-արքային» իլլի-
քի պարտում: Բայց դրանից թիւրքական
ստորաքաղաք լրագիրները տարածեցին, որ, իբր
թէ, Շահնաշին սուլթանի հետ հանդիպելիս
համբուրել է նրա ձեռքը: Այս լուրը հանեց
Շահին եւ նրա կցորդներին համբուրելուցից,
եւ աստիկ զարպայեց Կ. Պօլսի պարսիկ գաղ-
թակախութիւնը: Մահմուդեան աշխարհի աչ-
քում արքայից արքան», Իրանի տէրը, հաւա-
սարկից մի սովորական նշանաւոր մահմուդա-
կանի աստիճանին, որ արժանացել է ընդունե-
լութիւն գտնելու բոլոր մահմուդականների խա-
լիֆէ մոտ: Այս պատճառով էլ այն բոլոր ար-
տաքին ցոյցերը, որոնք տեղի ունեցան Կ. Պօլ-
սում ի պատիւ Շահի, կորցրին իրանց ն.անա-
կութիւնը: Մուգաֆիքը-Էդիսն Շահը ոչ միայն
չափազանց դժգոհ մնաց ընդունելութիւնից,
այլ եւ, ինչպէս հուսաւանդում են նրա հետեւորդ-
ներից մի քանիսը, համոզվեց, որ սիւնիները
խոստումներին եւ խօսքերին անկարելի է հա-
ւատալ: Այսպիսով այն բոլոր

ժամերական երկու մեծ պետությունները, լրագրական էջերից հետո չը գնացին:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

5 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Մուկոլի գրառման մասին գեներալ Սուբբոտինի միջոցով պաշտոնապես հաղորդվում է, թե առաջապահ զորքը, քաղաքը մասնավոր, դառա նրան շատ տեղ բացելի մէջ, հարուստ աները, կրպակները, ցղեան-ցղինի պալատը, գանձարանը և ուրիշ կառավարչական հիմնարկությունների շինությունները բոլորովին աւերված: Կայսերական պալատը կողոպուտված էր և պատրաստած այրելու բոլոր եւրոպական շինությունները և քերտոններն աները ոչնչացրած էին: Մեր զորքերը բնակիչների օգնությամբ հանգրից հրդեհը Գանձված են նորագոյն ձեռի շատ թշնադանթներ իրանց ուսմանը, նոյնպէս և հրադանթներ և մեծ քանակությամբ գնաակներ: Մերնք գրաւեցին նոյնպէս և վառօդի գործարանը:

Աղքատ և հիւանդ երեխաներին խնամող ընկերությունը, որ գտնվում է Մեծ-Իշխանուհի Ելիսաւետա Մակրիկինի անունով հովանաւորութեան տակ, հրատարակում է «Կապոյտ խաչ» օրացոյց, զա տեղեկութիւններ մի հաւաքածու է առաւելու պետութեան վերաբերմամբ քարտեզներով, յատկապէս զպատկերներով և նկարներով: օրացոյցը դուրս կը գայ նոյնմբերի 1-ին. գինը կազմի հետ միասին 1 ր. 50 կ. է, ճանապարհածախսով—2 ր.: Խմբագրությունը՝ Պետերբուրգ, Սերգիևսկայա:

ՕԴԵՍՍԱ, Կայսերական «ՍՏԱՆԴԱՐԴ» գրասենյակով Լիվադիայից եկաւ յունական արքայորդի Գէորգի, Կրէտէի գեներալ-նահանգապետը և երկաթուղով ճանապարհ ընկաւ դէպի Կոստանպէլ:

ԿԱՆՏՈՆ: Խոտարանները Սունատուհի հրամանատարութեամբ անցնել երկուշաբթի օրը գրաւեցին Մուկոլի քաղաքը Արեւելեան գետի վրա: Մուկոլի և Սո, չինական գլխաւոր ուժերի զուրկ անցած՝ այսօր առաւօտեան դուրս եկաւ Սամսոնից խոտարաններին հալածելու: Սամսոնի պաշտպանութեան համար նա թողել 250 մարդ:

ՆԻՒՆԻՍԻԱ: Հեռագրիչներին համաձայն՝ առաջին նիստը խաղաղութեան պայմանները քննելու համար՝ Լի-Սունդ-Չանգի և Ցինի նամակներում, որոնք ուղղված են օտարերկրայ զեպաններին, նշանակված է չարքով օրը:

ՇԱՆԳՀԱՅ: Նանկիւնից ստացված մասնաւոր տեղեկութիւններին նայելով՝ 2,500 մարդուց կազմված զօրաբաժնից, որ գեներալ Լիու վերցրել է անտեղից կայսր պաշտպանութեան համար, 1,500 մարդ փախան, երբ զօրաբաժնը անցաւ Եանցէ գետից: Մի ուրիշ զօրաբաժնի, կազմված նոյնպէս 2,500 մարդուց, նոյն նպատակով ճանապարհ ընկաւ Գուատունից: Այդ զօրաբաժնից ևս շատերը փախուստ տուին:

ՏԵՍԻՍԻԱ: Ռուսաց զեպան Գիրս մտադիր է մօտ օրերուս վերադառնալ Պեկին:

6 հոկտեմբերի

ՇԱՆԳՀԱՅ: Խանկուրից ստացված տեղեկութիւններին նայելով՝ Խուբէ նահանգի փոխարքան պատուէր ստացաւ թողնելու իր պաշտօնը և գնալու Սինանֆու: Այս տեղեկութեանը, որ պաշտօնապէս չէ հաստատված, հիւպատոսները այսու ամենայնիւ լուրջ նշանակութիւն են տալիս:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Կոնգրեսը հաղորդեց այստեղ չինական կառավարութեան անուով Լի-Սունդ-Չանգի արած առաջարկութիւնները, որոնք պէտք է հիմք ծառայեն խաղաղութեան բանակցութիւններին համար: Կոնգրեսը հեռագրով մինչեւ այժմ չէ հրատարակված: Գէյ, մի ժամ Մակ-Կինլէյի հետ տեսակցութիւն ունենալուց յետոյ, երկար խօսակցութիւն ունեցաւ Վուտինֆանի հետ:

Պեկին: Վաղըրդէէ հոկտեմբերի 4-ին եկաւ Պեկին: Գեներալ Վուարձոն հասաւ Պեկին և յանձնեց ֆրանսիական զօրքերին դրօշակներ, մի և նոյն ժամանակ կայսերական պալատի դաւթում զօրահանդէս կատարեց: Այն յայտարարում, որ Լի-Սունդ-Չանգ և Ցին յանձնեցին զիսկումատիական մարմին, յայտնվում է, թէ ժամանակ է սկսել խաղաղութեան բանակցութիւնները: «Մեծ-Խաղաղութեան» շարժմանը մասնակից անձինք կենթարկվին դատի և պատժի չինական օրէնքների համեմատ Լի-Սունդ-Չանգ և Ցին սկզբունքով ընդունում են վարձարութեան ան-

հրաժեշտութիւնը զեպանատների աւերման համար: Չեանները հաշի կանոն պետութիւնների լիազօրեցրել: Պետութիւնները կարող են կապել նոր առեւտրական դաշնագրեր կամ փոփոխումներ մտցնել հին դաշնագրերի մէջ: Իւրաքանչիւր պետութիւն կարող է յայտնել իր առանձին ցանկութիւնները՝ առաջարկելով ձեռնամուխ լինել խաղաղութեան բանակցութիւններին: Այս պատճառով Լի-Սունդ-Չանգ և Ցին պահանջում են անյապող դաշնագրերը և պետութեան տեսակցութեան վրա օտարերկրայ զեպանների հետ ցունդ-լի-եամէնում հոկտեմբերի 7-ին:

ՊԱՐԻՉ: Գէլիասէ դիւնց պետութիւններին երկրորդ յայտարարով, որի մէջ մասնաւորապէս նկատվում է իրաւունքը, որ իր առաջին յայտարարութեամբ հաւանութիւն է գտել, առաջարկում է իրաւործել նրա մէջ յիշված ծրագրերը: Գէլիասէ միտք է յայտնում, որ իւրաքանչիւր պետութիւն, ընդունելով յիշեալ պայմանները, տեղեկութիւն տայ այդ մասին Չինաստանին՝ կարգը չուտով վերականգնելու համար, և յանձնարարէ Պեկին իր ներկայացուցչին՝ յանձնել որոշված պայմանները չինական կառավարութեան Լի-Սունդ-Չանգի միջոցով: Մի քանի պետութիւններ արդէն զրական պատասխան են տուել այդ յայտարարին և ուրիշներից մօտ օրերուս սպասում է համաձայնութեան:

Խմբագր. ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ Հրատարակչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍՍԷՆԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱՆԵԱՆ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԱՍՏԱՐԱՆ (արդիօկառ) Եղիշէ Տեր-Ազարեանց այժմ ընկալում է Շուրալիրում: 1-3

ԲԺՇԿԱՊԵՏ ՍԻՆՏ. ԲԱՐԱՅԵԱՆ վերադարձած թիֆլիս, սկսել է ընդունել իր նախկին ընկերանում (Սերգիևսկի) 14) Կուրձքի և այլ ներքին հիւանդներին 10-12 ժ. առաւօտ: Եւրոպայի ներքին և րիվատիկներին 5-6 1/2 ժ. երեկ. (չ. և. Տ.) 1-6

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ ՄԵԼԻՔ-ԻՒՍՈՒՓ

պատմական պօժիս Գինն է 20 կոպ. Կապուց, Կայսերական Պեկին: 3-3

ՄԱՐԿԱՅԱՑՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՐՕՅԵԱԼՆԵՐ ԳԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ



ՅԻՍ-ԳԱՐՄՕՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ, ԳԻԹԱՆԵՐ, ՖԼԵՑՏՆԵՐ, ԿԱՐՆԵՏՆԵՐ, ՉՍԵՆԱՍԶԵՐ, ԼԱՐԵՐ, ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼԵ:



Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս: ՊՐԵՏՍԿՈՒՐԱՆՏՆ ուղարկվում է ձրի: ԵՐԱՇԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ԵՒ ՉՍԵՆԱՍԶԵՐԻ ԿՈՎԿԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԵՊՕ



Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս: ՊՐԵՏՍԿՈՒՐԱՆՏՆ ուղարկվում է ձրի: ԵՐԱՇԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ԵՒ ՉՍԵՆԱՍԶԵՐԻ ԿՈՎԿԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԵՊՕ

Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան

Музыкальное депо Б. М. Мириманиана, ТИФЛИСЬ. Дворцовая ул., д. Т. Д. 3. Банва. 17-20

ՇՈՒՄՈՎ ԼՈՅՍ ԿՐ ՄԵՆԻ

ՄԱԿԱՐ ԶՄՇԿԵՆԻ 1901 թ. ՕՐԱՅՈՅՑՆԵՐԸ

Ցանկացողները թող վաղօրոք յայտնեն, որպէս զի ժամանակին կարողանան ստանալ: (հ. շ.) 3-15

Մ Ի Հ Ա Յ Ո Ւ Հ Ի

որ գիտէ, ֆրանսերէն, ռուսերէն և մուգրիկ, ցանկանում է մի կամ երկու աղջկայ հետ պարակլ թիֆլիսից դուրս: Հասցէ՝ Лабораторная, № 5, д. Цуринова, кв. Шаровой. 2-3

ԲԺՇԿ Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆ

վերադառնալով թիֆլիս, վերանորոգեց ընթանի խոտոյի և առանձին հիւանդութիւնների բժշկութիւնը: Ընդունելութիւնը առաւօտեան 10-2 ժ. և երեկ. 5-7 1/2 ժ. իր նոր ընկերանում, որ գտնվում է հին ընկերանին կից, Վելյամինովսկայա փող. ա. Գարաշանի, № 4. [Вельяминовская ул. № 4, домъ Карташанъ]. 20-25

Առանձին և բերանի խոտոյի հիւանդութիւնների

ԲԺՇԿ ՆԻԿ. ԿԱՃԿԱՃԵԱՆ

ընդունում է հիւանդներ առաւ. 10-2 ժ. և երեկ. 5-7 ժ.: Երեւանեան հրապարակ. ա. Սարգսյանի. РОШОВЪ-ի լուսանկարչական գործարանի տակը. Эриванская площадь, домъ Харазова. (հ. շ.) 19-25

Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն ԵՒ Պ Ա Ն Ս Ի Օ Ն 3. ՂԱՐԱԳԵՕՁԵԱՆԻ

(Գոյ. VIII-րորդ ասրին. Թիֆլիս, Կուկիա, Тургеневская ул. № 5)

Բաղկացած է երկու պարաստական դասարաններից, որոնք իրանց դասընթացով համապատասխան են պետական միջնակարգ դպրոցների նոյն դասարաններին: Գործողում աշակերտները պատրաստվում են գիւնաղաններ, ընկալական և այլ պետական վարժարաններ մտնելու համար: Աշակերտները ընդունվում են իբրև գիշերօթիկ, ցերեկօթիկ ու երթեւեկներ: Կովկասի ուսումնարանական վարչութեան թոյլատուութեամբ ընդունվում են նաև բոլոր կառավարչական դպրանոցների օտորին դասարաններից աշակերտներ իրանց դասերի վերակրթութեամբ հանդերձ: Վարժարանում աւանդվում են նաև կրօն, հայոց լեզու, ֆրանսերէն լեզու և համառօտ հայրենագիտութիւն՝ փորձված ու հմուտ դասատուների ղեկավարութեամբ: Գործի կառավարիչ՝ Յ. Ղարաբեգեան (հ. շ.) 2-4

ТРЕБУЙТЕ ВЕЗДЬ ШОКОЛАДЬ СІУ ФАБР. С. СІУ И К. МОСКВА. N. 9,730 (2)

Ս արգիս Վ. Արրա հաւեւա ի

Հասցէ. Սօլլակ, Գանձօփայեա փող. ա. Թամուշի, № 26, բն. № 9. Սովորեցնում և պատրաստում է երկու սեռի անձանց չորս ամսվայ ընթացքում, երաշխաւորութեամբ և հարկաւոր դէպքում—յանձնարարականներ տալով պարագմունքներ գտնելու համար

Հ Ա Հ Ո Ւ Ս Պ Ա Հ Ո Ւ Թ Ի Ն

- 1) Կրկնակի իտալական հաշուապահութիւն իր բոլոր ճիւղերով.
2) Առեւտրական թուարանութիւն.
3) Առեւտրական թղթակցութիւն:
4) Գեղագրութիւն, ուսումնասիրութիւն զանազանատեսակ շրէֆտների և ուղղուն ամենալատ ձեռքերի:
Կարելի է տեսնել առաւօտեան ժամի 9-ից մինչև 11-ը և 4-ից մինչև 7-ը երեկոյան: (չ. ո. շ.) 10-14

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՅԻՐԱՄԻԱԿԱՆ ՆԱԽԳԼԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ե. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱՐՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկշաբթի մի անգամ:

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսել, մտնելով Տրապիզոն, Սամսո և Պոլս: Մեկնում Բաթումից չորեքշաբթի, 11/21 հոկտեմբեր—չորեքշաբթի, ԱՆՍՕԼԻ կապիտան ԲԻԱՆԿԻ, Եւ այսպէս չորեքշաբթի, երկու շաբթի մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ը ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոնակներ արվում են սովորական պակաս գներով:

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտիպոլի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար: Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալարաններին: ԲԱՐՈՒՄԻՍ—պ. Վիկտոր դ'Արնօն, Նաբէլէժնայա: ԹԻՖԼԻՍԻՍ—պ. Օ. Գ. Բարիկինդանանին, Սիժնի փող. Խօջափարուխովի և Մայսուրաձէի քարվանսարա: ԲԱԳՈՒ—պ. Վ. Ե. Մուրաֆնաններին, Նաբէլէժնայա փողոց, առև Կրասիլնիկովի, № 27: ՆՕՎՈՐՈՒՄ—պ. Ս. Մուրաֆնաններին, Նաբէլէժնայա փողոց, առև Կրասիլնիկովի (հ. շ.) 2-20